

Ա. Ռ. Ա. Խ. Օ Տ

Իմ Առաւօսը՛ս, բացուեցար, ա՛վ Առաւօսն իմ տանջանքի,
 Եւ դարձուցիր դէպի հոգիս ցոլները մութ բիւրեղներուն.
 Երկարեցիր մասներուդ մէջ որք ճրագիս պահը ոսկի,
 Մինչեւ մարիլն անոր յանկարծ սրտիս հեւքին մէջ բաբախուն...:



Կեանքն դարձեալ, իմ Առաւօս, Արեւագա՛լ սուրբ վաստակի,
 Դէպի նայուածքս դարձուցիր պարն սպիտակ տեսիլներուն.
 Երկարեցիր մասներուդ մէջ երազներու քելը ոսկի,
 Մինչեւ փրթիլն անոր յանկարծ շիթ մ'արցունքի տակ պսպրղուն...:



Վերագտնե՛լ տայիր ինծի ճրագիս պահը ոգեկան,
 Անցելանոյ՛ւ խորհուրդի մէջ երազին քելը ծիածան
 Անվերջօրէն հիւսուող սրտիս՝ անձկութիւնով կարօտալի,

Որպէսզի դեռ հաւատայի որ արդար բոց մը կը շողայ
 Այն կըրակէն զոր վառեցի եւ որով դուն ջերմացուցիր
 Ուխտաւորի թախծոն հոգիս ցրտասարսուտ համբուն վեպ...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

